Հավելված N 3

ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի

մայիսի 30-ի N 265-Ա հրամանի

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

«Ջրառ» ՓԲԸ-ը ստորև ներկայացնում է իր կարիքների համար էլեկտրական սարքերի վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-Ջ-ԳՀԾՁԲ-18/2 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2018 թվականի ապրիլի 16-ին կնքված NՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-Ջ-ԳՀԾՁԲ-18/2-1 պայմանագրում 2018 թվականի դեկտեմբերի 18-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1: Պայմանագրի գնի նվազեցում:

Փոփոխության նկարագրություն Պայմանագրի գինը նվազեցվել է՝ հիմք ընդունելով փաստացի մատուցված ծառայությունների արժեքը

Փոփոխության հիմնավորում Պայմանագրի 7.5 կետ, ՀՀ կառավարության 05.05.2017թ N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի 56-րդ կետ

Պատվիրատու՝ ***«Ջրառ» ՓԲԸ***

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

16.04.2018թ ԿՆՔՎԱԾ N ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԾՁԲ-18/2-1 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՍԱՐՔԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան « 18 » «__12__» 2018թ.

ՀՀԷԵԲՊՆ ՋՏՊԿ «Ջրառ» ՓԲԸ, ի դեմս տնօրեն Կ. Եփրեմյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Պատվիրատու», մի կողմից, և «Սինխրոն» ՍՊԸ, ի դեմս տնօրեն Դ. Ստեփանյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Կատարող» մյուս կողմից, այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 16.04.2018թ կնքված ՀՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-Ջ-ԳՀԾՁԲ-18/2-1 ծածկագրով «Էլեկտրական սարքերի վերանորոգման ծառայությունների մատուցման» պետական գնման պայմանագրի (այսուհետև Պայմանագիր) 7.5 կետը և փաստացի մատուցված ծառայությունները, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Փոխադարձ համաձայնությամբ՝ կողմերը որոշեցին

1.1 Պայմանագրի 4.1 կետով սահմանված ծառայության գինը՝ «31000000 (երեսունմեկ միլիոն) ՀՀ դրամ» բառերը փոխարինել «16473600 (տասնվեց միլիոն չորս հարյուր յոթանասուներեք հազար վեց հարյուր) ՀՀ դրամ» բառերով:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀԷԵԲՊՆ ՋՏՊԿ «Ջրառ» ՓԲԸ	«ՍԻՆԽՐՈՆ» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Վարդանանց փակուղի 8ա	ՀՀ. ք. Երևան 0053, Արցախի 73
«Արդշինբանկ» ՓԲԸ, Նալբանդյան մ/ճ	«Ամերիաբանկ» ՓԲԸ
h/h 2479000059160000, ՀՎՀՀ 00093621	h/h 1570021738940100, ՀՎՀՀ 01825192
Տնօրեն	Տնօրեն
_____ Կ. ԵՓՐԵՄՅԱՆ	_____ Դ. Ստեփանյան
Կ. Տ.	